



Лазаревскій Институтъ

Восточныхъ Языковъ



МОСКВА

Биб

74

flury

30

2009

~~891.99~~

01 JAN 2009

~~4-88~~ 88

Lucy

74 „ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԵՑԻՑ“

# ԳՐԻԳՈՐԻ ԽԱՐԹԵՑԻՈՅ



## ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԵՐԱԿԵՑ

## ԳՐ. ԽԱՀԱԹԵԱՆ.

## Արտադրած «Արարատ» ամնագրից

## ՀՐԱՄԱՆԱԿ

## **S. S. ՄԿՐՏՉԻ Ա.**

ՎԵՀԱՓԱՆԻ ԵՒ ԱՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻ ԻԿՈՆԻ

## ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՑ



ՎԱՂԱՐԵՍՎԱԾ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՉՄԻԱՅՆԻ

1897

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԵՑԻՑ»

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՄԹԵՑԻՈՅՑ.

Պատմական վիպսասանուրիւն:

## ՆԱԽԱԲԱՆ

Գրիգոր Խլաթեցին՝ «որդի ծերին» կամ ծերենց մականունով, Ճաղկել է ԺԴ-ըդ դարու վերջերին և ԺԵ-րդի առաջին քառորդում՝ իւր մայրենի Խլաթ ծննդավայրից ստացած լինելով Խլաթեցի կոչումը: «Սնեալ և վարժեալ ի զործ քահանայութեան առ սուրբ ճգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ» ասում է Խլաթեցու վարքագիրներից մէկը, «ի հոչակաւոր ուխտն ս. Ստեփաննոս Ձիպնավանք կոչեցեալ» և «վեց ամ սպասաւորեալ նմա», — գնաց այնուհետև Գրիգոր կատարելագոր-

Дозволено цензурою,  
24 Июня 1897 г. г. Тифлисъ.



714-2009

Խ. 811

ծելու իւր ուսումը Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վանքը «մեծ վարժապետ» Յոհանն Որոտնեցու մօտ՝ ուսումնակից ունենալով իրեն հոմանուն՝ յետոյ մեծահռչակ Տաթևացուն, և մնաց այնտեղ ութ տարի։ իսկ Յ. Որոտնեցու մահից (1386 թ.) յետոյ նա դարձաւ իւր բնիկ գաւառը՝ «իւր հոգեոր հարազատ և համշիրակ» գիտնական Սարգիս վարդապետի մօտ՝ Քաջբերունեաց Արծէշ քաղաքի Սուխարայ վանքը և տանն տարի «բաղում աշխատութեամբ դեգերեալ»։ ստացաւ նորանից աստիճան վարդապետութեան։ Խլաթեցու կեանքից յիշուում է այնուհետեւ, որ նա ճանապարհորդել է վարդապետների և աշակերտների ուղեկցութեամբ գեպի Սուրբ Քաղաքը (Երուսաղէմ), ուր կացել է երկու տարի։ Հաւանական է, որ այդ միջոցներին լինի վախճանած Սարգիս վարդապետը (1401—1402 թ.) որին՝ ինչպէս յայտնի է, յաջորդում է Սուխարայ վանի պում նորա աշակերտ և Խլաթեցու ընկերակից վարդան վարդապետը՝ Հոգուց վանքի ուխտից։ իսկ սորա մահից յետոյ, որ հանդիպեց Տոսպայ Սալնապատ վանքում, ուր հեռացած էր սա բարբարոս այլազգիների երեսից, —նոյն Սուխարայ ուխտի առաջնորդութիւնը վարեց կարճ ժամանակ

Խլաթեցին։ Սակայն իւր նախորդի պէս նեղուելով այլազգիների արշաւանքներից և ստիպուած լինելով թողնել Սուխարայ ուխտը, նա հեռացաւ իւր առաջին ուսումնատեղին՝ այն է Բզնունեաց Արծէշ քաղաքի Դաստակ կամ Ծիպնայ անապատի Ստեփաննոս Նախավկայի վանքը։ Այստեղ անցրեց Գըրիգոր իւր կեանքի մնացեալ օրերը՝ շարունակ նուիրուած լինելով գրական զբաղմունքների և բարեգործութեան և մեռաւ մարտիրոսական մահով՝ նահատակուելով քրդերից 27-ին մայիսի, 1425 թուին 75 կամ 80 տարեկան հասակում։<sup>1</sup>

Այս հաշուով Գր. Խլաթեցին պէտք է ծնուած լինի մերձաւորապէս 1350 թուականին, —իւր

1. Տե՛ս Առաքել (ըստ Երեւութիւն՝ Սիւնեցի, աշակերտ Խլաթեցու) վարդապետի ճառը—«Նահատակութիւն Խլաթեցոյ Գրիգոր Ծերենց վարդապետի» ձեռագիր Յայսմաւութեան քաղած—«Նօտարը Հայոց» հաւաք. Դեւոնդ Վ. Փերզալէմեան, Կ. Պօլիս, 1888, էջ 75—77։ Նոյն Առաքել Սիւնեցին իւր «Եղերերգութիւն ի մահ նահատակութեան Ծերենց Գրիգոր վարդապետի» շափաքերականում կոչում է իւր ուսուցչն նաեւ Գրիգորիս Բզնումի։ («Հայերգ», Տէվկանց, Թիֆլիս, 1883, էջ 175—180.)—Տե՛ս Թումա Մեծորեցի, Պատմ. Լանկթամուրայ, Փարվեց, 1860, էջ 14, 17, 41—43, 85.—Զամշեան, Պատմ. Հայոց, Գ. 451—452։

սկզբնական ուսումը և կրօնաւորական կոչումը ստացած Վարդան ճգնաւորի մօտ 6 տարի մնալուց յետոյ՝ մօտաւորապէս մինչև 1375 թ., —կատարելագործած իւր ուսումը Յ. Որոտնեցու մօտ 8 տարուայ ընթացքում, որ ասել է՝ ոչ ուշ քան 1385 թ. (որովհետեւ յաջորդ թուին վախճանուեց «մեծ վարժապետը»), —և վարդապետական աստիճան ստանալու համար գեգերած լինելով Սարգիս վարդապետի մօտ՝ 10 տարի, այսինքն ոչ ուշ քան 1400 թուականը (որովհետեւ այդ միջոցներին վախճանուեց Սարգիս վ.): Եթէ Խլաթեցու Երուսաղէմ գնան ևս դնենք նորա վարդապետական աստիճանն ստանալուց յետոյ՝ նախ քան վանահայրութիւնը, պէտք է որ այդ ուղեղութիւնը եղած լինի 1400—1405 թուերի մէջ, որովհետեւ յաջորդ 1406-ին նա ստանձնեց Սուխարայ ուխտի և կարծ միջոցից Ցիպհավանքի առաջնորդութիւնը:

Ժամանակակիցները — Թոմա Մեծոբեցի, Առաքել Սիւնեցի և այլք — մեծ գովութեամբ են խօսում Խլաթեցու մասին. «ոչ գոլով նման նմա ողորմած և մարդասէր և սպասաւոր աղքատաց և տնանկաց»: — Կոչում են նորան «մեծ րաբունապէտ», որ ի վերջին աւուրծու քան զառաջինսն գե-

րագոյն երևեցաւ»: որ «յիսուն և հինգ ամ զիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»: որ «կրկին վկայասէր երևեցաւ և զանցայտ պատմութիւնս սրբոց ի լոյս ածէր»: որ «յոյժ ուսումնասէր գոլով և մարտիրոսաց պատուղ՝ մարտիրոսաց պսակացն եհաս» և այլն:

Դր. Խլաթեցու անունով հասել են մեզ այլ և այլ գրուածքներ: <sup>2</sup> Աւելորդ չենք համարում առաջ բերել դոցա համառօտ ցուցակը՝ օգտուելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից: Հարկաւ, ցանկալի էր ստուգել այս ցուցակը Խլաթեցու հնագոյն և ընտիր գրչագիրների հիմամբ և գորանով աւելի ճիշտ որոշել մեր հեղինակի գրականական գործունէութեան ծաւալը, որ պէտք է խօստովանել սակաւ ծանօթ է և բնաւ չէ ուսումնասիրուած:

1. Նախ յիշելու է նորա Տաղերը, որոնց տուների կամ տողերի սկզբնատառերը սովորաբար հեղինակի անունն են կազմում: Դնում ենք այստեղ մի քանի Տաղերի վերնագրերը՝ հետեւելով Հ.

2. Հմմտ. մանաւանդ Հ. Յ. Տաշեանի «Ցուցակ Հայ. ձեռ. Մատ. Մխիթ. և Վիէննա, 1895—96, էջ 543 եւ Ցանկ՝ էջ 1074:

Տաշեանի «Յուցակին»։—Գանգատ ունիմ, Յարութեան, Գովութիւն Սաղմոսի, Գիւտ գօտոյն Աստուածածնի։—Վենետիկեան ս. Ղազարի մի գրչագիր ամփոփում է իւր մէջ 23 աղերսական Տաղեր։ Թէկ ի նկատի ունենալու է միշտ, որ գրչագիրներում շփոթուում են յաճախ համանուն հեղինակների մանաւանդ մանր գրուածքները՝ մէկի երկը միւսին վերագրելով։

2. «Ողբ մեռելի», որ միքանի գրչագիր հէորդ Երգնկացուն են վերագրում։

3. «Խրատական բաներս լաւ եւ ընտիր»—Աւրհնեալ է չայրն Լուսոյ, Որ ստեղծ ըզմեզ ի հողոյ, Շնորհեաց մեզ միտք հանձարոյ, Առնել զկամս իւրոյ . . . և այլն, տունք Ա—Ք։

4. Գանձեր, որոնց տողերի սկզբնատառերը նոյնպէս հեղինակի անունն են կազմում։ Դնում ենք այստեղ մի քանի գանձերի վերնագրերը՝ հետեւով չ. Տաշեանի «Յուցակին»։—Թլփատութեան, Կիրակոսի, Վահանայ Գովզնեցւոյ, Տեառնդառածին, Առաջաւորաց, Ատովմեանց, Թէոդորոսի, Բ. Կիր. Աղուհացից, Կիւրդի, Յովհ. Երուսաղէմացւոյ, Ղազարու, Նոր Կիր., Ներսիսի Մեծի, Փոխման Աստուածածնի, Վարագայ Խաչի, ՀԲ. Առաքելոց, Յովակիմայ և Աննայի, ս. Նիկո-

ղայոսի, Թագէոսի և Բարդուղիմէոսի, Իգնատիոսի Աստուածազգեցի, Որդւոց որոտման, Սուքիասանց, Աւագ ԲՀ. և ԳՀ., Գ. Կիր. Աղուհացից, Պիտաման Յովհաննու, Տապանակի, Գանձ Կիրակամտի, Գիշերապաշտման։—Սոցա վերսց աւելացնելու է «Արարատի» 1895 թ. ապրիլ համարում ն. Քարամեանցի հրատարակած 16 տող գանձը։ Տես տպագիր Գանձարանք։ Հմտ. նաև Ս. Կանայեանցի կազմած Յուցակ հայ. ձեռ. Ներսիս. հոգ. գպրանոցի (Թիֆլիս, 1893, էջ 11—16) հետաքրքրական Գանձարանը՝ 1505 թուին գրուած։ Սակայն աւելի լիակատար է վերոյիշեալ Վենետիկեան գըրչագիրը, որի մէջ կան պահուած Խլաթեցու 41 գանձերը։

5. Գանձ ձեռնադրութեան (տպ. Գիլք Զեռն. Կ. Պոլիս, 1752.):

6. «Վասն Մովսիսի Գրոցն»—Մեկնութիւն Արարածոց—որ բաւական ընդարձակ ձառ է՝ հետեւողութեամբ Բարսղի Վեցօրէից, Արիստոտելի, Ականց գրոց և Վարդանայ Մեկնութեան գրուած և հետաքրքրական լեզուի կողմից։

7. «Վասն Յեսուայ» (Հատուած)։

8. «Խրատ Ժամատեղաց ըստ արեւելեան սահմանաց և սկսուածոց և ասութեան աղաւթիցն»,

զոր խնդրեալ ս. վարդապետն Յակոբ Ղրիմեցին ի մեծ ըարունացյն Գրիգորէ Խլաթեցւոյ»:

9. Ճառ ի ծնունդ ս. Աստուածածնի: <sup>5</sup>

10. Ներքող տարեւորական տեղեաց:

11. «Դատաստան կամ որոշումն վասն խնդրոյ Երիք պսակի՝ այն է թուղթն նորա (Խլաթեցւոյ) առ ոմն»: (Չեռ. Յուցակ Վենետիկ. ս. Ղազարի Գրչագ.):

12. «Թուղթը» Խլաթեցւոյ: (Անդ.):

13. Մանաւանդ արժանի է ուշադրութեան Խլաթեցու խմբագրած «Յայսմանուրը»՝ իւր ժամանակ նահատակուած վկաների պատմութիւննեով հանդերձ. «զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն, ասում է Մեծոփեցին մեր հեղինակի մասին, որ կոչի Յայսմանուրց, շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետաց՝ ի լոյս էած»: Այս նոյն երկն է, որ ինչ ինչ յետասամուա յաւելուածներով տրպագրուեց երկու անգամ կ. Պոլիս (1706 և 1730 թթ.) և մինչև այժմ ևս գործ է ածուում

3. Այս Ճառի յաջորդ ներքոյի, որպէս եւ Խլաթեցու Տաղերն ու Գանձեթն ամփոփող վերը յիշած Անենետկեան լիակատար գրչագը մասին հաղորդել է ինձ սիրայօժար Արժ. հ. Յակոբոս Տաշեանը, որին յայտնում եմ այսու իմ ջերմ շնորհակալութիւնս:

շատ տեղ չայ եկեղեցիներում, ուր դեռ մուտ չէ գործել Պոլսի վերջին (1834)՝ աւելի կատարեալ հրատարակութիւնը՝ յայտնի Տէր Իսրայէլի Խըմբագրած օրինակից:

14. Խլաթեցու վերջիշեալ երկրասիրութիւնների վերայ աւելացներու է և՝ մինչև այժմ միքանի կարճ հատուածներով միայն ծանօթ՝ ներկայ «Յիշատակարան Աղէտից», <sup>4</sup> որ գուցէ Զամչեանի (Դ. 451) յիշած «Պատմութիւն վկայից նահատակելոց ի ժամանակս իւր» զլուածքը լինի: Սա

4. Այս գրուածքից բոլորովին տարբեր է Գրիգորի (հաւանականորէն՝ Խլաթեցու) մի ծաղը. «Եկայք ողբացուք, — Եղբարք զչարութիւն — և զգի նետողաց»... եւ այլն. (Տե՛ս Յուցակ հայ. ձեռագ. Ներսիս. Հոգ. Դպրանոցի, էջ 15) որպէս եւ «Ճռաքաղի» 1861 թ. օգոստ. — սեպտեմբ. համարում Գրիգոր Երիցու նոյնակս «Յիշատակարան» կոչուած «Տունը թուով հարթեր եւ քսան», բայց աւելի ճիշտ 256 տող՝ աւելի կրօնական, քան պատմական ոտանաւորը՝ 1335 թ. գրուած, որ ասել է՝ թէ ոչ մի կերպ Խլաթեցու գործը չէ կարող լինել: — Մեր «Յիշատակարանից» մի քանի համառօտ հատուածներ կան ըերած միջամշջ վերը յիշած Անեւոնդ վ. Փիրզակէմեանի «Նօտարք Հայոց» գրուածքում՝ էջ 5, 36 եւ 47՝ ընդամէնը 33 տող եւ Հ. Անեւոնդ Ալիշանի «Այրարատում»՝ էջ 323—325՝ ընդամէնը 77 տող:

460 տողից բաղկացած մի չտփաբան պատմութիւն է, որ մենք Պատմական վիպասանութիւն անուանեցինք և որը ամփոփում է իւր մէջ Հանկթամուրի և այլ բռնակալների օրով՝ 1386—1422 թուերին Հայաստան տեղի ունեցած զարհուրելի կոտորածների և տառապանքների տիսուր անցքերը՝ ժամանակակից երբեմն նաև ականատես մատենագրի ճշմարտապատում և սրտաշարժ նկարագրութեամբ։ Զը նոյած իւր չափաբերական ձեխն և բանաստեղծական պարագաներին՝ այս երկը պատմական մեծ արժեք ունի ի միջի այլոց և այն պատճառով, որ նա նոյն ժամանակի պատմագիր թումա Մեծոփեցուց աւելի վաղ է գրուած և տեղ գեղեցիկ կերպով ստուգում ու լրացնում է սորան։

Մեր վիպասանութիւնը պահպանուել է Արդուին քաղաքի Լուսաւորչայ Հայոց եկեղեցում գտնուած բոլորագիր գրչագիր ձայնքաղ Դանձարանի մէջ՝ յիշատակարանի վերջը, որից իմացուում է, որ գրչագիրը գրուած է Վան քաղաքում՝ Հայոց ՀժԱ = 1462 թուին — ուրեմն Խլաթեցու մահից 37 տարի յետոյ։ Ես ընդօրինակել եմ տուել այս գրուածքը յիշատակի արժանի հանգուցեալ Դրիգորիս Արքեպիսկոպոս Աղուանեանցի 1886 թ. ինձ ուղարկած «Տոմար արձանագրութեան» մի տետ-

րակից, որ արտագրուած էր Կարսի առաջնորդարանի քարտուղար պ. Խ. Դարբինեանի ձեռքով։ 5

Լոյս ընծայելով այս վիպասանական երկը՝ մենք ի նկատի ունինք ոչ այնչափ նորա բանաստեղծական և գեղարուեստական կատարելութիւնները, որովհետև նա արդարե միջակ գրուածք է՝ միջակ ոճով յօրինուած, — որչափ նորա պատմական բովանդակութիւնը և մանաւանդ նորա ընդհանուր տրամադրութիւնը և ոգին, որ այնպիս ժամանակակից են և զուգագեպ մեր ներկայ անմիսիթար վիճակին . . . :

«Յիշատակարանն Աղէտից» հրատարակում ենք ամբողջութեամբ և անփոփոխ՝ բոլորովին համաձայն մեր զրչագիր օրինակին, բնագրի միայն այլազգի բառերը նոտրագրով նշանակելով և նորա տողերի թիւը որոշելու համար արաբական թուա-

5. Այդ տետրակը իւր ժամանակին ապահովութեամբ վերադարձրել եմ ես Գլուգորիս արքեպիսկոպոսին։ իսկ իւր սեալհական ձեռագիր աշխատութիւնը՝ «Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878», — որ ինքը հանգուցեալ սրբադանը յանձնել էր ինձ տաղագրելու ըստ իմ հայեցողութեան, լոյս կը տեմնի շուտով Բարձրագոյն հաստատուած Մ. Էմինի Ազգագրական ժողովածուի մէջ։

Նըշաններ գնելով լուսանցքում։ Բացատրութեան  
կարօտ մի քանի կէտերի մասին աւելորդ չը հա-  
մարեցինք անհրաժեշտ ծանօթութիւններ տեղաւո-  
րել բնագրի ներքեւ։

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՅ:

27 ՓԵՄՊՈՒԹՔԻ 1897 թ.

Մովուա,  
Հազարեան ծեմարան։



«ՑԻՑԱՑԱԿԱՐԱՆ ԵՎԵՏԻՑ»

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՐՈՒՄ,

ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է

ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ,

ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԾԵՐԵՆՅ ԿՈՉԻ ԽԼԱԹԵՑԻ».

- 
- 1 Ի յութ հարիւր Հայոց թուական  
Հնդորս և Հինգ եօթն յաւելան (1386 թ.),  
Յունուարի մին պահք Յայտնութեան  
Լոյս արեռւն խաւարեցան։
- 5 Մեծ վարդապետն անուն Յոհան,  
Որ և Կախիկ անուն Ճնշնդեան,  
Յետ վեց աւուրն խաւարման

- 
7. Թովմա Մեծովեցին (էջ 15) անօրոշ է աւանդում  
խաւարման մասին. «Եւ ի սոյն աւուրս հանգեաւ է  
Քրիստոս (Յոհան վ.) եւ խաւարումն եղեւ աշխարհիս  
Հայոց»։

Փոխի առ Տէրն իւր անժամական:  
ի սոյն աւուրս գառնութեան  
10 ծրագալուցի աւր Յայտնութեան  
Մեծ պատուհաս ի Շահաստան  
Բարբարոսաց ազգէն հասան:  
Արքայն Հոնաց Թուխթամիշ իսան  
Զաւրս առաքեաց ի Պարսկաստան,  
15 Որ եկն արար առ և Թախտան  
Մինչեւ յերկիրն Հայաստան,  
Հինգն Յունուարի Թավրէզ մըտան,  
ի քսան և ինն ի Նախչըւան,  
Անտի գնացին դէպի Մուղան,  
20 Դարձան յաշխարհն իւրեանց բնական.  
Զառ և զաւար ընդ ինքեանս տալրան,  
Մըտին յաշխարհըն Հոնական,

8. Զամեան (Գ. 450) Յոհանն Կախիկի կամ Որոտանեցու մահը գնում է 1388 թ., Ալիշան («Սիսական», 220) 1385 կամ 1386 թ.:—«Անժամական»—այսպէս մեր օր. Փիրդակեմեանի օր. («Նօտարք», էջ 36) ունի...առտէըն իւր անձկական:

15. Թախտան Պարսկ. բառ=աւարառութիւն:  
17—18. Ժամանակադրական այս մանր որոշումները չեն յեշում թ. Մեծ. (էջ 14):

Անթիւ վնասէր գործեցան.  
ի գալ նոցա մինչեւ գարձան  
25 Բազմաց արիւնը յերկիր հեղան,  
Եւ շատք ի ձիւնն միսեցան,  
Բազումք յահէ նոցին փախեան  
Եւ [ի] նըղմունս սատակեցան.  
Մարք ըղտղայոց գութ մոռացան,  
30 ծնաւզք մննկանց դահիճ եղան.  
Շատք ի սրոյ նոցին մեռան  
Եւ այլ բազումք չարչարեցան,  
Ընտ ընտ այս գործըս չարին  
Եւ ընտ կորուստ Հայաստանին  
55 Եհաս միւս այլ հարուած կրկին  
Եւ դառնագոյն քան զառաջին:  
Մինչդեռ ի նոյն էաք սըզին,  
Եկեալ եհաս մեզ ձայն գումին,  
Թէ շարժեցաւ տուն Խորազմին,

23. Այս տողի մէջ թուում է թէ մի վանկ պակաս է. արդեօք սպասելու չէր—«Անթիւ վնաս էր որ գործեցան»:

28. Մեր օրինակում «Եւ նըղմունս», որ մենք ուղղեցինք «Եւ ի նըղմունս»—համաձայն քերականութեան եւ վանկերի չափին:—33. «Ընտ ընտ»—այսպէս մեր օր. արդեօք՝ ընտուս եւ կամ թերեւս՝ Եւ ընտ...:

40 Առհասարակ ցեղ Թաթարին,  
 Ժառանգաւորք Սըմբրդնդին,  
 Աւտար որդիքն Աբրահամին—  
 Միահազոյն յաշխարհս մըտին,  
 Յաթուս Ատըրպատականին,  
 45 Առին աւար և գերեցին  
 Զազգս Պարսից և Հայ զարմին:  
 Տապալեցին, յատակեցին,  
 Անխայաբար խոցոտեցին,  
 Զարըս սրոյ Ճարակ տուին  
 50 Եւ ըզկանայսն գերեցին.  
 Զոմանց գլուխսըն քերթէին,  
 Հանդերձ հերաւքն խըլէին,  
 Զայլոց զըունչսն արգելուին,  
 Եւ հեղձամահըս խեղդէին.  
 55 Որպէս զոչխարըս մորթէին,  
 Փոկս ի թիկանցն հանէին.  
 Զկէսըս հըրով խորովէին  
 Եւ ճենճերովքըն ցնծային.  
 Շատք գլրիստոս ուրանային,  
 60 Եւ ըզՄահմէտ գաւանէին,  
 Եւ ընք գաւառ Այրարանին  
 Մըտին յաշխարհըն յԱզւանին.  
 Զարքայանիստ քաղաքն առին,

Որում Տըփիսիսըն կոչէին.  
 65 Զարքայն Բագրատ ըզՎացին  
 Ի հաւատոցն ուրացուցին:  
 Անտի անդրէն դարձ արարին  
 Եւ ի Մուղան ձմեռնեցին:  
 Ապա յաւուրս գարնանային  
 70 Դարձ ի Սիւնիս Մեծն արարին,  
 ԸզՈրոտայն դզեակն առին,  
 Մինչև ի Կարս արշաւեցին,  
 Զերկիրըս ամէն չաւլ արարին  
 Ի յանցանելն երթեւեկին,  
 75 Զի յետ գարձան և կրկնեցին  
 Երրորդ անգամ չորրորդէցին,  
 Որոյ անուն գլխաւորին  
 Էր Լանկ Թամուր չարեաց զընդին:  
 Այս էր ի թիւ ութհարիւրին  
 80 Եւ երեսուն և վեց ամին. (1837թ.)  
 Զամուր տեղան յաւար առին  
 Եւ շատ ոջիրըս գործեցին.  
 Յորոց և մի էր և Բըջնին,  
 Որ էր ալթու երկուց պետին.  
 85 Զոր առին և քանդեցին

Զեպիսկոպոսն սպաննեցին,  
 Այլ և զշասանըն ծարեցին  
 Երեք որդւովքըն սպաննեցին.  
 Զի ըզնոցին ամուրն առին  
 90 Եւ չորս հարիւր անդէն սպանին,  
 Եւ յԵրեան մեծ աւանին  
 Արս հինգհարիւր կոտորեցին:  
 Չունիմ ասել քան զոր կրեցին  
 Քրիստոնէից ազգ Հայ զարմին:  
 95 Դողան ոսկերքս և սաւառնին.  
 Լոյս իմ քաղի, սիրալս ճըմին,  
 Քանզի աշտոք իմ տեսանին  
 Ողորմագին հարուած սոցին:  
 Իշխանք բազումք ի տանց ելին  
 100 Եւ ի յընչից պարապեցին,  
 Յերիւարացըն զըրկեցին  
 Եւ հետիոտը տանէին:

86. Բջնոյ եպիսկոպոսը՝ ըստ Մեծոփեցու (Էջ  
 19), էք Վանականը (Չամչ. Գ. 422 ունի՛ Տէք Վանակ):  
 87. Հասան իշխաննին չէ յիշում Թ. Մեծոփեցին:  
 91. «Երեւան մեծ աւանն» եւս չկայ Մեծոփեցու  
 մօտ:  
 95. «Սաւառնին»—այսպէս մեր օր. արդեօք՝ սար-  
 պովին եւ կամ սարսափին:

Տըզայքն ի մէջ ճանապարհին  
 Յոչ ի կարել գնալ՝ մեռանին,  
 105 Եւ կրաւնաւորք վանականին  
 Մոլորելով՝ յարկ ոչ գըտին.  
 Որք ի կանայս ոչ նայէին՝  
 Հարկիւ ի մէջ նոցա մտին:  
 Կարաւառ հացի մերկ շրջէին,  
 110 Եւ բոկ ոտամբք հետեւէին:  
 Պատիւ չը կայր պատուականին,  
 Եւ ոչ նըշան ունեւորին:  
 Զը կայր ոչ հաց հացաբաշխին,  
 Եւ ոչ զինի զինարբուին:  
 115 Զը կայր ոչ ձի ձիաւորին,  
 Եւ ոչ արլեկի հետեւակին:  
 Աւտարք յաւտարլս շրջէին  
 Եւ կերակուրս մուրանային:  
 Տիկնայը որ ճոխ տունս ունէին  
 120 Եւ մետաքսաւք պերճանային,—  
 Հացակարաւտս երևէին,  
 Ծածկոյթ անձանցըն խնդրէին.  
 Իշխանք, որ պետք անուանէին  
 Եւ արծաթով յըզփանային,  
 125 Ազքատացեալքք լինէին  
 Եւ կերակրոց կարաւտէին:

Եւ ոլք բազմաց հացըս տային՝  
 Մին պատառոյ ակն ունէին.  
 Թէպէտև յոյժ ամաչէին:  
 Այլ ի կարեացըն լրէին.  
 Թէե մուրալ պատկառէին,  
 Այլ ի սովոյն յանդգնէին:  
 Ծիրեալք ի ցաւս ախտանային  
 Աւս անդր և աստ մեռանէին.  
 Մանկունքն ի մարսըն նայէին,  
 Միթէ կենայ հընարս առնէին:  
 Մարքն ի գթոյն խորովէին,  
 Արագ ըղկեանս վճարէին:  
 Հարքն ի գորով տղայոց լային,  
 Աղիողորմն վայէին  
 Ի տեսանելն զոր սընուցին  
 Դառըն կարեաւքն ցաւազին.  
 Ի մեռանել մանկանց նոցին  
 Ինքեանք հոգիքն քաղէին:  
 Կիսոց չը կայր ոք որ լային,  
 Ի՛ոչ գերեզմանս ձանաչէին.  
 Եւ այսպիսի ողորմազին  
 Այս տեսողացն երեւին:  
 Այս ոչ միայն քրիստոնէից,  
 Այլ ի Տաճիկ ազգաց բնաւին

Զի հասարակ էր նեղութիւն  
 Պարսից ազգին հայ և Թուրքին:  
 Եւ այս ամէն յայնկոյս գետին,  
 Որ յերածիսայ անուն կոչին.  
 Իսկ յանցանելն յայսկոյս գետին,  
 Եւ յարշաւելն ըզհետ Թուրքին  
 Մինչև յԱմթայ ջուրն հասին,  
 Բազում ոճիրըս գործեցին:  
 Անտի դարձան ի հայք ելին  
 Եւ ի վերայ Վանայ եկին:  
 Պատեցին, պաշարեցին  
 Զամուր գղեակն յաւար առին,  
 Զչայ և զօտաճիկորն կապեցին  
 Եւ ի քարանցն հոսեցին.  
 Այնքան հարին, սատակեցին,  
 Մինչ մըսագէզ անդ արարին:  
 Այլ և զամուրն նրնջակին  
 Թողում ասել զանցս նորին,  
 Որ ի յաւուրց Աւագ Զատկին

167—172. Խընջակի պաշարման ժամանակին վերա-  
 բերեալ մանցամանութիւնները պակասում են Թ.  
 Մէջութեցու մօտ (էջ 17). Եսկ Չամչեանի պատմածը  
 (Թ. 421) հակառակ է Խլաթեցու հաղորդածին:

- 170 Մինչեւ ի տաւն Սըրբոյ խաչին  
ծանր զաւրաւք պաշարեցին.  
Բայց վընասել ոչ կարացին:  
Ապա յետոյ դարձ արարին  
Յաշխարհն իւրեանց ուստի եկին:  
175 Դարձեալ կրկին ի գուրս եկին  
Ի քառասուն և՝ երկու ամին  
Ի Բարելոն արշաւեցին  
Ի ի Միջագետա կոխեցին,  
ԶՈւրհա քաղաքըն պանծալին  
180 Եւ ըզԱմիթ երեւլին,  
ԶՄերափին ամօւր և զՆըսերին—  
Զորս բնաջինջ գերեցուցին:  
Եւ զայլ բազում քաղաքանին,  
Զորս քանդեցին, աւելեցին:  
185 Անտի դարձան յաշխարհս վերին  
Մինչեւ յԱնիկ արշաւեցին,  
Զոր և ջանիւ մեծաւ առին,

176. Այսինքն Հայոց 842. թուին=1393. Թ. Մեծովեցին (էջ 44) 844=1395 թուականին է դնում Լանկ Թամուրի երկրորդ արշաւանքը:  
181. Կրսերին=Մժբին:  
184. Փիրզակիւ. օր.—«Զորս քանդեցին և գեղեցին»:

- Եւ զՄսըրըն գերեցին:  
Անտի դարձեալ յետ գնացին  
190 Եւ զաւրս թողին յԵրնջակին.  
Տասնուշինգ ամ խըսարեցին  
Զբերդին Երնջակ ապա առին:  
Զթողում ասել զդործ անարին  
Զվատթարհանդէս Վրաց արքային,  
195 Որ եկն արտր վատ յաղթութիւն  
Զզաւրսն փախոյց ըզԶաղաթին,  
Որ պաշարեալ խըսարէին  
Զամօւր գզեակն Երնջակին:  
Անտի հՀան զլՍանի որդին  
200 ԶՍուլթան Տախիրն յԵրնջակին.  
Տարաւ առ իւր և զաւրացոյց

191. Երնջակի պաշարողն էր Լանկ Թամուրի որդի Միրան Շահ Զաղաթան (Թ. Մեծ. էջ 71). վոխանսկ «տասնուշինգ ամ», որ չէ յիշում Մեծովիեցին, Ալեշանի («Սիսական», 364)՝ ըստ իս՝ աւելի ուղիղ «ընդերկար ամիս» է գնում:—Խըսարէ=պաշարէլ:

200. Երնջակի թիր կամ Դանկր և կամ Տահիր (Տախիր կամ Տայիր) Սուլթանը Բաղդատու թագաւոր Ահմէտ կամ Ահմատ խանի որդին էր, իսկ Ահմատ—Այշեխուր Սուլթանի կամ Շէլ Ա. Էյիս խանի որդին: (Զամէ. Գ. 357, Ալիշան, «Սիսական», Անդ.):

201. «առ իւր» այն է ի Տփիսիս:

Եւ ետ տանել Ահմատ Խանին:  
 Եւ ի գնալ չար զաւակին՝  
 Ապստամբեաց ընդդէմ խանին  
 205 Սուլթան Ահմատ թագաւորին,  
 Որ էր որդի Խանոյիսին.  
 Ոչ աջողեալ այն անբախտին  
 Սուլթան Տահիր որդւոյ խանին.  
 Զի հայրանենգ եղեալ չարին  
 210 Հետըն տարաւ ի Բաղդադին:  
 Իսկ ի լլսել Լանկ Թամուրին,  
 Զոր ինչ արար արքայն Վրացին,  
 Ի բարկութիւն շարժեալ կրկին  
 Հանդէս արար իւր հեծելին:  
 215 Այլ բազմութեամբ քան զառաջինն  
 Ի դուրս եկեալ Թամուր բէկին  
 Յամուրսն եմուտ Վրաց տանին,  
 Արար գերի զամենեսին:  
 Անտի գնաց մինչ ի Զըմիւրին  
 220 Քաղաք Լիկեայ ծովեզերին,  
 Զչարսըն կոխեալ զիլդրումին՝  
 206. Այսինքն՝ Խան Վեյսին, որ վերոյեշեալ Շէր  
 Աէյս խանն է:  
 221. Նոյնն է, որին Թ. Մէծոփեցին (էջ 65)  
 «Խոնդքեալ Խլարումի» (Կայձակ) է կոչում, այն է  
 Օսմանցոց Սուլթան Բայազիւլլ:

Զհպաւ յաղթող մեծ սուլթանին  
 Զշարայ թաթարս այլ ընդ նմին  
 Գերի տարաւ զամենեսին:  
 225 Որոց ոչ էր թիւ համարին  
 Կոտորելոց զորս գերեցին  
 Ի տուն Գամբաց Կապադովկին,  
 Որ Մէջերկրեայ Հոռոմք ասին:  
 Ո՛չ, զայն դազայն զոր արարին  
 230 Արանց կանանց և ընդ մանկախին,  
 Զարսն թողեալ մինչ կենդանին,  
 Հողով Ջրովին հեղձուցին:  
 Իսկ ըզմատաղ տղայ մանկախին  
 Զայն կալոտիս ձիոցն արկին:  
 235 Իսկ յիշանել Միր Թամուրին  
 Ի շահաստան Դամասկոսին՝  
 Ծով ու ցամաք սասանեցին  
 Վասըն լըրոյ չար համբաւին.  
 Զորս սըրոյ Ճարակ տային,  
 240 Եւ զորս բոցով հրոյ այրէին:  
 Եւ ըզգլուխսն զոր կըտրէին,  
 Զայնս մըներայս յաւրինէին:  
 242. Միմերայս՝ որ է միհարայս=աշտարակ:

- Եւ յայսպիսի չար համբաւին  
Աշխարհ ամեն սասանեցին:  
 245 Զայս արարեալ Միր թամուրին  
Դարձաւ յաթոռ Սըմբրդնդին.  
Եւ անդ եհաս աւր վախճանին,  
Սատակեցաւ յիւր աթոռին:  
Իսկ Միրան Շայ որդի նորին  
 250 Եկեալ ե թախթն թաւրիզին,  
Որոյ ընդգէմ կացեալ նորին  
Հարա Ուսուֆ բախաղուին  
Էհար զզաւրսն Զաղաթին  
Եւ առ զզուիս Միրան Շային.  
 255 Թագաւորեաց ի նոյն թախթին  
Թաւրեժ քաղաք շահաստանին:  
Արար բազում խաղաղութիւն

252. Հարա Ուսուֆ որ և Միր Ուսուֆ և Ուսուֆ  
բէկ՝ Սասնյ իշխեցող Մարաց ամերան էր, որին թ.  
Մեծոփեցին լոկ Յուսուֆ է անուանում: Բախաղուռ  
կամ Բահադուր թաթար. բառ է և նշանակում է քաջ  
կամ գիւցադն:

254. Ալիշանի օր («Այրարաս», 323) ունի «Հառ  
զգութին...»:

256. Ալիշանի օր. ունի այս տողը նախընթացից  
առաջ:

- Եւ յաջողութն մարդկային.  
Էրէմնութիւն և էմնութիւն,  
 260 Ամենեին անգողութիւն,  
Իսկ յաճախել մեղաց ախախն  
Մարդկան ազգիս քրիստոնէին,  
Եղե գնալ խան Ուսուֆին  
ՑԱխըլծըլնէ քաղաք Վրացին,  
 265 Արար ղազայ և գերութիւն  
Անթիւ վնաս և չարութիւն:  
Այս էր ի թիւ ութ հարիւրին,  
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416թ.):  
 270 Իսկ զգերիսըն զոր առին  
Ցաւտար երկիր վըտարեցին.  
Բաղդատ և ի Մըսըր հասուցին  
Ի՛ ի Խորասան Պարսկաց տանին:  
Ոչ մին հազար կամ հինգ վեցին,  
Այլ քան ըզբիւրըն էր աւելին  
 275 Նոյն սպաննելոցն էր բազմութիւն  
Եւ անհամար որ ոչ թըւին:  
Իսկ ի յամի ութ հարիւրին  
Ի՛ եւթանասուն թըւականին (1421)  
Հարայ Ուսուֆ տէրըն թախթին

259. «Էրէմնութիւն»—այսպէս մեր օր.

- 280 Սատակեցաւ ըստ արժանին,  
Խաղք, խայտառակ որպէս տեսին,  
Անկեալ յերկիր մարմին պղծին,  
Զի շփոթեցաւ զաւրքն չարին  
Եւ յիրերաց փախուստ առին:  
285 Ուռեալ նեխաւ գէշ գարշելին,  
Ադուաւք հանին զաշեր նորին:  
Իսկ յետ երից աւուրց եկին,  
Բարձին զդէշն և թաղեցին:  
Իսկ զաւրք չարին Միր Ուսուֆին  
290 Հնդ որ գնացին՝ աւերեցին.  
Չար, անզգամ մարդիկ էին,  
Եւ անասախ ազդ թուրքմանին.  
Հնդ մեռանել Ուսուֆ բէկին  
Զաւրք Չաղաթին եկին հասին.  
295 Որոց գըլուխ և առաջին  
Էր Շախ Ռուչ անուն նորին:  
Էր նա որդի Միր Թամուրին  
Կըրսեր եղայլ Միրան Շային.  
Զաւրքն բազում քան զթամուրին,

286. Ալիշանի օր «զաղիր նորին», որ աղաւաղ ընթերցուած է:  
292. Անասախ թաթար. բառ=անիրաւ: Ալիշանի օր «անառակ ազդ», որ անյաջող սրբագրութիւն է:

- 500 Այլ աւելի քան զնոսին:  
Հինդ բիւր՝ որ է յիսուն հազար,  
Էր սորա զաւրքն ընդ նոյն համար+  
Զի երեսուն էր թամուրին  
Ի՞ այլ աւելի քան ըզնոսին:  
505 Բայց ոչ ունէր սա չարութիւն,  
Այլ բարեսէր հանդարտութիւն:  
Յորմէ սարսկան ազդ թուրքմանին  
Վասն իւր չարեացըն զոր ունին.  
Զի անողորմ էր ւ'անիրաւ,  
510 Անմըրւած ւ' անշաղաւած,  
Անդատաստան և անհաւատ,  
Պիղծ, չարագործ իսկ և տըմարդ,  
Անպատկառ և անամաւթ,  
Մեղաց աման, չարեաց անաւթ:  
515 Փառք Աստուծոյ զոր ինչ արար  
Հնդ թուրքմանին չարեացն յարմար,  
Քանզի խըրտն նախ և փախեան

307. «Սարսկան»—այսպէս մեր օր. թերեւս՝ աւասեան:

310. Երկու արար. բառեր հայ ան բացասականով. գոցանից առաջնորդ նշանակում է անագործն, անգութ, և երկրորդը՝ անիրտ, անխեղճ:  
317. «Խըրտն»—այսպէս մեր օր. արգեօք՝ խրտննեն:



Եւ յետ դարձան կոտորեցան.

Հստ արժանեացն ի ձեռս անկան.

520 Շահըլիուխին և մատնեցան:

Շատք ի սըսց նոցա մեռան

ի՝ այլքըն փախեան և գերեցան,

Կողոպտեցան և գերեցան,

Զիոց կոխան սատակեցան,

525 Խաղք խայտառակ թալանեցան,

Ի սար և ի ձոր փախըստական:

Ընդ որ փախեան հալածեցան

ի՝ ինքեանք միմեանց դահիճ դարձան,

Անթիւ ըոզակ էր զոր տարտան,

530 Աղէկ ձիան և շատ ուղտան:

Կին և տըզայքն ի թիւ չանկան

Զոր գերեցան և կոխեցան:

Բայց ողորմած և խըզական

Նա սիրտ ունէր Շահըլիուչն այն.

535 Ասախ արտր իտուքմ և հրաման

Ոչ կորուսել զամենեսեան,

Ամ թոյլ ետուր որ ցըրուեցան,

ի՝ աւտար երկիր վըտալեցան:

329. «Ըոզակ»=աւար:

335. «Ասախ» կամ խասախ թաթար. բառ.—օւրէսք, երաւունք. — «խուքմ»=պատուէր:

Եւ Շահըլիուչ այն մեծ սուլթան

540 Գընաց դարձաւ ի խորասան,

Գընաց յաթոռն իւր ըընական,

ի Սամրրզանդ հայրենական,

Զթախթըն թողեալ ըզշահաստան՝

Անտէր Թաւրէզ քաղաքըն զայն:

545 Ազա որդիք Ուսուֆ Բէկին

Եկեալ թախթին այն տիրեցին.

Բայց ինքեանք ոչ բարիշեցին,

Այլ մին զմիւսըն փախուցին:

Իսկ անիծեալն ամենեւին

550 Կըրսեր որդի Միր Ուսուֆին՝

ՀՍպանդիարն անաւթ չարին,

Լիրը, անզգամ, յիմար հոդին,

Էր վետակար և աւերող

Շատ բարեկի չէն գաւառնին.—

555 ԶԱրձէշ և զԱրձկէ աւերեց,

Զթասեն և զԱւնիկըն քակեց,

Զկարնոյ քաղաքըն զԱւզըռում

Քան զամենայն խիստ աւերեց:

Իսկ հաքանդար աւագ որդին

351. Թ. Մէծովեցին (էջ 79 . . .)՝ վոխանակ  
«Սպանդիարի», միշտ Ասպահան է կոչում Ուսուֆի կըրտ-  
սեր որդուն:

360 Հարայ Ուսուֆ բախաղուտին—  
Նա ի Թաւրէզ տիրեաց թախթին  
Ի' ասախ արար շաա բարութիւն:  
Բայց մեզ աւար ած և խաւար  
Եւ չարութիւն դառն և դքժար,  
565 Խեծել արար շաա բազմութիւն  
Ի' եկն ի վերայ Խլաթայ բերդին:  
Բերդին վեսաել ոչ կարացին,  
Այլ գքաղաքըն այրեցին.  
Ի յԱղուանք արշաւեցին  
570 Եւ չար դազայ անդ արարին.  
Ըզերդն առին, կոտորեցին.  
Շատ քրիստոնեայք անդէն սպանին,  
Քան զերկերիւրն այլ աւելի,  
Զոր անդ ի սուրըն քարշեցին,  
575 Թող զորս ի ծովըն խեզեցան,  
Եւ քարավէժ եզեալ կորեան:  
Ո՛չ, գեղեցիկ կերպ ու սուրած

365. «Խեծել» նոյն է՝ հեծել՝ հեծեալ, հեծեալ  
զօրք: Ալիշ օր. «հեծել»:  
369. «Աղուվանք» բերդը պէտք է եղած լինի  
Խլաթի մօտերքը՝ թերես սորա և Ռզակ գեւզե միջեւ,  
իսկ Աղեսիս գաւառի Աղայ կամ Աղու գեւզը, որ  
յեշում է Թ. Մեծովեցին (էջ 92), կարծեմ որ տար-  
բեր է սորսնից:

Այն մանկանեկացն որ կորուսան։  
Լաւ հարկեւոր տանուտիրայք,  
580 Համեստ և աղւոր տանտիկընայք,  
Բարձրահասակ և աղէկ տեսակ  
Գուն ու կերպով ձոխ կըարձակ,  
Այս ամենայն ի սուր անցան,  
Գերեզմանի չարժանացան,  
585 Կանայք աղայաւքըն գերեցան,  
Քան զհինգ հարիւրն այլ աւելան.  
Զի ի միոյ գեղջէ չէին,  
Այլ ի բազում աեզաց էին,  
Ի չիզանայ և ի Բաղիշոյ,  
590 Որք հասկաքաղ եկեալ էին.  
ծըզաք և Աղաղ ամենեին,  
Շատք յՍղիթայ անդէն էին,

389. «Հեղան» որ և Խիզան:

391. Այս գեղեցը մինչեւ այժմ կեցած են Վա-  
նայ Ռովի ափին՝ Դատվանի և Խլաթի միջեւ։ Հմմ.  
Նայ Սեղագը. Տեղագը. ի Փոքը և ի Մեծ Հայու, էջ  
275 և Միւախորեանի Խմարագը. Ուզեոր. Ա. էջ 85—86:  
392. «յՍղիթայ»—այսպէս իմ օրինակում. բայց  
Սղեր կամ Սղիր գեւզ ես չը կարողացայ գանել Խլաթի  
շըջակայքում։ Արդեօք Ա'ի և Ա'ի շփոթութիւն չէ  
այստեղ և յԱղիթայ (կամ յԱղիտայ) կարդալու չէ,  
որպիսի (Աղիտ). գեւզ արդարեւ գոյութիւն ունի Խլաթի

Ոլք ի սուրն քարշեցան,  
Կանայք որդւովքն գերեցան:  
595 Այս ամենայնի պատճառ է այն  
Շամբռըդին ամիրայի,  
Զար սատանին արբանեկի  
Եւ ի նեռին կարապետէ,  
Որ նա արար հպարտութիւն,  
400 Հշնազանդեցաւ հաքանդարին:  
Շատք որ սպան և՝ անթաղ մնացին,  
Ոչ հաց հոգւոյ ոչ դրամ մնողին.  
Եւ որք գերի վարեալ գնացին,  
Յաւտար երկիր վրաարեցին.  
405 Ի յայլազգին խառնակեցան,  
Հզչարութիւն նոցա ուսան:

մօտելքը և յատկապէս Ծղակի և Աղաղի մօտ։ Հմմտ.  
Միրախորեան, Անդ. «Աղիթայ» ունի և Ալշ. օր.։ Վեռոքերեալ երեք գեւղերեց Թ. Մեծովեցին միայն Ծղակն է յեշում։

395. Ալիշանի օր. «Այս ամենայն ի պատճառէ  
Այն Շամբռըդին ամիրայէ»։  
396. «Շամբռըդին»—այսպէս իմ օրինակում. կաը-  
դալու չէ Շամբռին, որ Բաղիշու Շամշատին ամիրան  
էր։ Թեժ. էջ 83։  
401. Ալիշան օր. «Շատք ոք ըսպան» . . . .  
402. Ալիշանի օր. . . . . ոչ դրամ հողին։

Աւտարացան և յոռացան,  
Հզչայրենիսլն մոռացան,  
Պըղծեցան և գարշեցան,  
410 Աղտեղացան և զազրացան,  
Ոչ ի կամաց, այլ յակամայ  
Հանդիպեցան այս դարք նոցա։  
Միթէ Աստուածն քաղցրանայ  
Եւ ազատէ անտի զնոսա։  
415 Ոլք հանդիպիք այս երգակիս,  
Զիս յիշեցէք ըզեղկելիս—  
Զմրափած դրիգոր Խլաթացիս,  
Որ սպասաւոր կոչիմ բանիս,  
Եւ սիսալանաց շարագրիս—  
420 Անմեղազիր լերուք անձինս,  
Որ զրէի ըզբան ողբիս  
Եւ կըսկըծայլ սիրտս ի փորիս。  
Ոչ հանգուրժեալ մըտաց խըղձիս,  
Զոր գրբեցի ես ի քարտիս։  
425 Քանզի ի մէջ էաք չարիս,  
Որ եկն եհաս մեր աշխարհիս,  
Եւս առաւել մերում ազգիս,  
Այս տառապեալ Հայոց տոհմիս՝  
Անուամբ միայն քրիստոնէիս,  
430 Գործոց դատարկ ամբարձշտիս,

Սուրբ աւրինաց հակառակիս,  
Բարիատեաց չարասիրիս,  
Եմք անաղաւթք հեղդ ի բարիս,  
Անապաշաւ խըզճամըտիս,  
  
435 ծոյլ և պղերգ յամեն բարիս,  
Ի՞ անկարեկից յայլոց կարիս,  
Յիշոյնատու ոչինչ բանիս,  
Ի՞ երդըմնապանց ևս ի սնոտիս,  
Բակիկի յաշաղ յայլոց բարիս  
  
440 Եւ նախանձու առ ընկերիս,  
Քինախըլնդիր չարաճըճիս  
Եւ բամբասող միշտ ըզբարիս:  
Վասն այսորիկ տաժանելիս  
Եւ տառապեալ եմք յաշխարհիս,  
  
445 Մեր խաւարած եկեղեցիս,  
Ազգս ցցուած յամեն տեղիս:  
Բայց գոհութիւն մարդասիրիս,  
Որ ապրեցաք ի յայս վշտիս,  
Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւն,  
  
450 Այլ փոյթ եհան յանդորրութիւն  
Տուք աւրհնութիւն չաւրին անեղ  
Եւ միածնի բանի նորին,

Այլ և Հոգւոյն իւր էակցին  
Փառք և պատիւ ի մէնջ տացին,  
455 Ելրորդութեանն միակին  
Հայր և Որդի և Սուրբ Հոգին,  
Որ ետ ինձ կար աըկար անձին  
Եւ զեխն ու զնուն հասոյց ի մին,  
Շամեալ զգանձերս որ ի միջին,  
460 Են առաջին և նուն յետին:

458—460. Խթէ այստեղ մի այլ վուսաւերական  
լմաստ ըլ կայ օր. հեղինակի անուան վերաբերմամբ,  
թերեւս «Յիշաաակարանի» տողերի քանակութիւնն է  
ակնարկում Խլաթեցին Ե (5) և ՚ (400) թուանիշ  
տառերով: Նման թուարկութիւն առաջ է բերում մեզ  
հեղինակը և ու մի այլ գրուածքում՝ Սադմովի կանոնա-  
գլուխների, գուբաների և տուների թիւը որոշելու  
առթիւ.

«Զիս ի յշ-էւ հիմնարկեցին,  
«Տարեալ ի հիմ ա-արտեցին,  
«Ութ խորանաւ զարդարեցին,  
«Վաթսուն և չորս գուռն բացին . . . . » 8  
(Տես Հ. Տաշեանի «Յուցակը» էջ 644.) :

«Ազգային գրադարան



NL0177426

